

# «LIGA Mobile» ԲԶՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## 1. Պայմանագրում օգտագործված հիմնական հասկացությունները

- 1.1. Հրապարակային պայմանագիր՝ «LIGA Mobile» բջջային հավելվածի միջոցով ծառայությունների մատուցման պայմանագիր՝ կնքվող «LIGA Mobile» բջջային հավելվածի օպերատորի և Օգտատիրոջ միջև:
- 1.2. «LIGA Mobile» բջջային հավելված (այսուհետ՝ Համակարգ)՝ Մասնակիցների, այն է՝ Օգտատերերի կամ Օգտագործողների, Ծառայություն մատուցողների, Տարածողների սպասարկումը, այդ թվում՝ ապահովագրական պայմանագրերի թողարկումը, ապահովագրական ու Համակարգի միջոցով առաջարկվող այլ ծառայությունների մատուցումն ապահովող կարգերի, ապարատածրագրային համալիրի և գործընթացների ամբողջություն:
- 1.3. Համակարգի օպերատոր՝ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ (լիցենզիա՝ թիվ ԱՊՈ 0009, ՀՎՀՀ՝ 02589581, ՀՀ ԿԲ գրանցում՝ 11), որը պատասխանատու է Համակարգի գործունեության և դրա շրջանակներում առաջարկվող ապահովագրական ու այլ ծառայությունների մատուցման համար:
- 1.4. Օգտատեր կամ Օգտագործող՝ ֆիզիկական անձ, որը Համակարգի օպերատորի հետ կնքել է Հրապարակային պայմանագիր՝ Համակարգի օպերատորի կողմից նախապես հայտարարված և սահմանված պայմանների ու կանոնների համաձայն ապահովագրական և այլ ծառայություններ ձեռք բերելու ու այդ ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու վերաբերյալ:
- 1.5. Ապահովագրական ծառայություններ՝ Համակարգի միջոցով Օգտատերերի նույնականացում, պայմանագրերի կնքում, Համակարգի օպերատորի հետ ցանկացած եղանակով կնքված պայմանագրերի որոնում, պայմանագրերի վաղաժամկետ դադարեցում, վերակնքում, փոփոխում, դիմումների ներկայացում, պատահարների գրանցում, համապատասխան վճարումների կատարում:
- 1.6. Ծառայություններ մատուցող անձ՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Համակարգի օպերատորի հետ կնքել է պայմանագիր՝ մատուցվող ծառայությունների և/կամ կատարվող աշխատանքների և/կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական և այլ գործարքների դիմաց Համակարգի օպերատորի հետ կնքված ապահովագրական պայմանագրի հիման վրա ծառայություններ մատուցելու և դրանց դիմաց վճարելու մասին՝ Համակարգի կանոնների համաձայն:
- 1.7. Համակարգի կանոններ՝ Համակարգի շրջանակներում Մասնակիցների միջև համագործակցությունն ապահովող և Համակարգում առաջարկվող ապահովագրական ու այլ ծառայությունների մատուցման գործընթացը կարգավորող՝ Համակարգի օպերատորի կողմից ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան մշակված նորմերի, կարգերի և ընթացակարգերի ամբողջություն:
- 1.8. Հաշվառման հաշիվ՝ Համակարգի օպերատորի տվյալների կենտրոնացված շտեմարանում Օգտատիրոջ անունով բացված և Համակարգի օպերատորի կողմից վարվող/սպասարկվող հաշիվ:
- 1.9. Օգտագործողի գրանցում՝ Համակարգում Օգտագործողի անունով Հաշվառման հաշվի բացման գործընթաց:

## 2. Պայմանագրի սպասարկում

- 2.1. Գաղտնաբառ՝ Օգտատիրոջ կողմից ստեղծվող տառերի և նշանների համակցություն, որը Համակարգի կողմից օգտագործվում է որպես սույն Հրապարակային պայմանագրի [Հավելված 2](#)-ի պահանջներին համապատասխան նույնականացված Օգտատիրոջ՝ Համակարգ մուտք գործելու և Համակարգում հասանելի ծառայություններից օգտվելու միջոց:

2.2. Ծածկագիր կամ PIN կոդ՝ Օգտատիրոջ կողմից ստեղծվող թվերի համակցություն, որը Համակարգի կողմից դիտվում է որպես Օգտատիրոջ էլեկտրոնային ստորագրություն և թույլ է տալիս նրան կատարել վճարումներ և այլ գործառնություններ, ինչպես նաև կատարել Գաղտնաբառի ու Համակարգի օպերատորի կողմից սահմանված որոշ տվյալների փոփոխություններ:

2.3. Բջջային հեռախոսահամարի կամ էլեկտրոնային փոստի նույնականացան կոդ՝ թվերի համակցություն, որն ուղարկվում է Համակարգի օպերատորի կողմից Օգտատիրոջ մուտքագրած համապատասխանաբար կամ հեռախոսահամարին կամ էլեկտրոնային փոստի հասցեին՝ համապատասխանաբար կամ կարճ հաղորդագրության կամ էլեկտրոնային նամակի տեսքով՝ մուտքագրված կամ բջջային հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն Համակարգում նույնականացնելու նպատակով:

2.4. Ապահովագրական պայմանագիր՝ Համակարգի միջոցով կնքված պայմանագիր, որով սահմանվում է Համակարգի օպերատորի կողմից Օգտատիրոջն ապահովագրական ու դրանից բխող այլ ծառայությունների մատուցման պարտավորությունը:

2.5. Տվյալների մշակում՝ Օգտատիրոջ կողմից տրամադրված տեղեկատվության հավաքագրում, մուտքագրում, պահպանում, օգտագործում, ուղղում կամ օրենքով չարգելված այլ գործողությունների իրականացում՝ ապահովագրական և Համակարգում առաջարկվող այլ ծառայությունների մատուցման նպատակով:

2.6. Սպասարկման կետ՝ Համակարգի միջոցով կատարված գործառնությունների սպասարկման համար նախատեսված վայր (օրինակ՝ Համակարգի օպերատորի գրասենյակ, մասնաճյուղեր և այլն):

2.7. Համակարգի օպերատորի պաշտոնական կայք՝ [www.ligainsurance.am](http://www.ligainsurance.am) համացանցային տիրույթում գտնվող կայք, որտեղ տեղեկատվություն հրապարակելու համար միակ պատասխանատուն Համակարգի օպերատորն է, և տեղադրված տեղեկատվությունը կրում է պաշտոնական բնույթ:

2.8. Վճարում՝ Օգտատերերի կողմից դրամական պարտավորության կամ այլ վճարման կատարում:

2.9. Վճարման ընդունում՝ Հաշվառման հաշվից Օգտատիրոջ հանձնարարությամբ կատարված գործարք և համապատասխան վճարահաշվարկային փաստաթղթի ձևակերպման պահ, որի արդյունքում իրականացվում է պայմանագրի կնքում և տեղի է ունենում գործարքի արդյունքում միանվագ կարգով կամ պայմանագրով սահմանված պարբերականությամբ և ժամկետներում գումարի ընդունում Համակարգի օպերատորի կողմից:

2.10. Վճարման կատարում՝ Օգտատիրոջ կողմից վճարման փաստացի կատարման վերաբերյալ Համակարգի օպերատորի՝ որպես վճարման հասցեատիրոջ կողմից տեղեկատվության կամ կցված լռելյայն քարտին միանվագ կարգով կամ պայմանագրով սահմանված պարբերականությամբ և ժամկետներում գումարի փաստացի ստացման պահը: Վճարման կատարման ժամկետը կարող է տարբերվել ըստ Ծառայություն մատուցողների կամ մատուցվող ծառայության տեսակի:

2.11. Հատուցման ստացում՝ հայտի կարգավորման շրջանակներում Համակարգի Օպերատորի կողմից Օգտատիրոջ հաշվառման հաշվում մուտքագրված վճարային քարտին գումարի փոխանցման և համապատասխան վճարահաշվարկային փաստաթղթի ձևակերպման պահ:

2.12. Հատուցման տրամադրում՝ հայտի կարգավորման շրջանակում Համակարգի օպերատորի կողմից վճարման փաստացի կատարման վերաբերյալ Օգտատիրոջ՝ որպես վճարման հասցեատիրոջ տեղեկատվության կամ կցված լռելյայն քարտին գումարի փաստացի ստացման պահը: Վճարման կատարման ժամկետը կարող է տարբերվել ըստ Ծառայություն մատուցողների կամ մատուցվող ծառայության տեսակի:

2.13. Համակարգի հաշվառման հաշիվների և Օգտատերերի կարգավիճակներ՝ հաշվառման հաշիվների և օգտատերերի կարգավիճակներն ու դրանց նկարագրությանը վերաբերող փաստաթղթում ([Հավելված 2](#)) սահմանված պայմաններով և նկարագրությամբ կարգավիճակներ:

2.14. Տվյալների վերականգնման ընթացակարգ՝ Օգտատիրոջ կողմից Գաղտնաբառի և/կամ PIN կոդի կորստի դեպքում, նույնականացված հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխության, նոր Գաղտնաբառի և/կամ PIN կոդ ստանալու կամ Հաշվառման հաշվում առկա որոշ տվյալների փոփոխման կամ վերականգնման ընթացակարգ, որին Օգտատերը կարող է ծանոթանալ՝ կապ հաստատելով Համակարգի օպերատորի զանգերի կենտրոնի կամ Համակարգի օպերատորի հաճախորդների սպասարկման գրասենյակի հետ:

2.15. Ավարտված գործարք՝ Գործարք, որով Համակարգի օպերատորը կատարել է Օգտատիրոջ և Ծառայություն մատուցողների միջև հարաբերությունների կապակցությամբ Օգտատիրոջ կարգադրությամբ Օգտատիրոջ նկատմամբ առկա բոլոր պարտականությունները:

2.16. Չավարտված գործարք՝ Գործարք, որով Համակարգի օպերատորը չի կատարել Օգտատիրոջ և Ծառայություն մատուցողների միջև հարաբերությունների կապակցությամբ Օգտատիրոջ կարգադրությամբ Օգտատիրոջ նկատմամբ առկա պարտականությունները:

2.17. Չեղջի տրամադրում՝ Համակարգի օպերատորի կողմից սահմանված օրերի կամ ժամկետների համար կամ որևէ այլ հիմքով՝ պայմանագրերի կնքման և/կամ Համակարգի օպերատորի կողմից առաջարկվող այլ ծառայությունների ստացման համար գնիջեցում:

### **3. Պայմանագրի առարկան**

3.1. Հրապարակային պայմանագրի համաձայն Համակարգի օպերատորը պարտավորվում է Օգտատիրոջ և Ծառայություն մատուցողների միջև հարաբերությունների ծագման կապակցությամբ Օգտատիրոջ կարգադրությամբ Օգտատիրոջ Հաշվառման հաշվով կատարել ապահովագրական պայմանագրերի վավերացում, պատահարների գրանցում, դիմումների ընդունում, համապատասխան ծանուցումների տրամադրում, վճարումների ընդունում, իսկ Օգտատերը պարտավորվում է ընդունել Համակարգի օպերատորի կողմից պատշաճ ձևով մատուցված ծառայությունները՝ համաձայն Համակարգի օպերատորի պաշտոնական կայքում ներկայացված Համակարգի կանոնների:

3.2. Համակարգի միջոցով առաջարկվող ծառայությունների ցանկը հասանելի է Համակարգում և/կամ պաշտոնական կայքում:

3.3. Համակարգում առաջարկվող բոլոր տեսակի ծառայությունների ստացումը (բացառությամբ ապահովագրական պայմանագրի կնքման, որը հնարավոր է առանց [Հավելված 2](#)-ում նկարագրված նույնականացման գործընթացի) Օգտատիրոջ կողմից հնարավոր է միայն նույնականացվելուց հետո և եթե Օգտատիրոջ հաշվառման հաշվին կա կցված նույնականացված վճարային քարտ՝ Օգտատիրոջ անունով, կամ վճարման պահին մուտքագրվում են վճարային քարտի տվյալները: Նույնականացման գործընթացի պայմանները և կարգը մանրամասն ներկայացված են [Հավելված 2](#)-ում:

3.4. Հրապարակային պայմանագրի համաձայն՝ Համակարգում Օգտատիրոջ կողմից կատարվող վճարային բոլոր գործարքները կատարվում են Օգտատիրոջ հաստատմամբ՝ համապատասխան վճարային քարտից:

### **4. Հրապարակային պայմանագրի կնքումը**

4.1. Հրապարակային պայմանագրի կնքման համար նախապայման է Հրապարակային պայմանագրով սահմանված կարգով Համակարգում Օգտատիրոջ գրանցվելը, Համակարգից ID հերթական համար

ստանալը՝ բջջային հեռախոսի նույնականացման կողմուքագրելու ճանապարհով: Հրապարակային պայմանագիրը համարվում է կնքված դրա դրույթներին համաձայնեցումն էլեկտրոնային ձևով հաստատելուց հետո:

4.1.1. Համակարգում գրանցվելու համար Օգտատերը պետք է Համակարգում մուտքագրի իրեն պատկանող կամ իրեն հասանելի բջջային հեռախոսահամար, ստեղծի գաղտնաբառ և PIN կոդ:

4.2. Օգտատերը Հրապարակային պայմանագրի կնքմամբ հաստատում է, որ ինքն ամբողջությամբ ծանոթացել է Հրապարակային պայմանագրի դրույթներին, Համակարգից օգտվելու կանոններին, և այդ կանոններն իր համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի են, Համակարգի օգտագործումն ու Հրապարակային պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը բխում են իր կամ իր կողմից ներկայացվող անձի իրական շահերից, և որևէ կերպ չեն խախտում իր կամ իր կողմից ներկայացված անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև չեն կարող որևէ վնաս պատճառել նշված անձանց:

4.3. Օգտատերը, կնքելով սույն Հրապարակային պայմանագիրը, դառնում է Համակարգի օպերատորի հաճախորդ, ապա [Հավելված 2](#)-ով սահմանված կարգով պատշաճորեն նույնականացվելով՝ հնարավորություն է ստանում օգտվելու Համակարգում առաջարկվող բոլոր ծառայություններից:

## 5. Համակարգի օպերատորի իրավունքներն ու պարտականությունները

5.1. Համակարգի օպերատորը պարտավոր է.

5.1.1. Օգտատիրոջ համար ապահովել Համակարգից անխոչընդոտ օգտվելու հնարավորություն:

5.1.2. Իրականացնել Օգտատիրոջ պատշաճ նույնականացում՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան ակտերի և [Հավելված 2](#)-ի:

5.1.3. Միջոցներ ձեռնարկել Համակարգի միջոցով փոխանակվող տեղեկատվության գաղտնիության պահպանման և երրորդ անձանց չլիազորված մուտքերից, օգտագործումից և/կամ բացահայտումից պաշտպանության ուղղությամբ:

5.1.4. Իրականացնել Օգտատիրոջ կողմից Գաղտնաբառի և/կամ PIN կոդի կորստի դեպքում նոր Գաղտնաբառի և/կամ PIN կոդի տրամադրում կամ վերականգում:

5.1.5. Ապահովել Համակարգի գործունեության համար անհրաժեշտ սարքավորումների և ծրագրերի անխափան գործունեությունը:

5.1.6. Համակարգի գործունեության շրջանակներում Օգտատիրոջը տրամադրել տեղեկություններ Համակարգի միջոցով տրամադրվող ծառայությունների և այլ հնարավորությունների մասին:

5.1.7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել կատարված վճարումները հիմնավորող էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի տրամադրումն Օգտատիրոջը:

5.1.8. Վեճերի ծագման դեպքում՝ Օգտատիրոջ դիմումի հիման վրա տրամադրել հաստատված տեղեկանք Օգտատիրոջ կողմից Համակարգի միջոցով կատարված գործարքների մասին:

5.1.9. Կեղծիքների, չարտոնագրված գործառնությունների, տեխնիկական սխալների կամ այլ խնդիրների դեպքում, եթե դրանք առաջացել են Համակարգի Օպերատորի մեղքով, իրեն հասանելի մեթոդներով Օգտատերերին անմիջապես տեղյակ պահելուց հետո, փորձել վերականգնել Համակարգի աշխատանքը՝ առավելագույնը 24 (քսանչորս) ժամվա ընթացքում, հակառակ դեպքում՝ հատուցել Օգտատիրոջ կրած իրական վնասը՝ Օգտատիրոջ կողմից նման պահանջ ներկայացնելու դեպքում:

5.1.10. Օգտատիրոջը տեղեկացնել բոլոր այն հանգամանքների առաջացման, փոփոխման կամ վերացման մասին, որոնք էական նշանակություն ունեն Հրապարակային պայմանագրի դրույթների կատարման համար:

## 5.2. Համակարգի օպերատորն իրավունք ունի.

### 5.2.1. Մերժել Օգտատիրոջ գործարքը, եթե.

- ա. Օգտատերը չի անցել համապատասխան նույնականացում,
- բ. Օգտատիրոջ գործողությունների օրինականության վերաբերյալ առկա են հիմնավոր կասկածներ,
- գ. Օգտատերը սխալ է մուտքագրել PIN կոդը,
- դ. Կցված վճարային քարտային միջոցներն անբավարար են վճարումները կատարելու համար,
- ե. Նման մերժումը սահմանված է Հրապարակային պայմանագրի այլ կետով, Համակարգի օպերատորի կողմից ընդունված գրավոր այլ փաստաթղթով, որին Օգտատերը միացել է կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

5.2.2. Համակարգում և/կամ Համակարգի օպերատորի պաշտոնական կայքի համապատասխան բաժիններում սահմանել և իր հայեցողությամբ թարմացնել Հաշվառման հաշվին կամ Հաշվառման հաշվից կատարվող գործարքների նվազագույն և առավելագույն պահանջերը:

5.2.3. Մերժել Օգտատիրոջ կողմից ներկայացված՝ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման, ապահովագրական պատահարի գրանցման կամ այլ դիմում, եթե այդ գործարքի կատարումը Համակարգի օպերատորի կողմից հնարավոր չէ՝ Համակարգի կանոններից կամ Ծառայություն մատուցողների պահանջից ելնելով կամ հնարավոր չէ ապահովել ծառայությունը ստացող կողմի՝ գործարքը կատարելու վերաբերյալ համաձայնությունը:

5.2.4. Համակարգի գործունեությունն ապահովող սարքավորումներում և ծրագրերում բարեփոխումների, ծրագրային բարելավումների, անվտանգության մակարդակի բարձրացման և այլ կանխարգելիչ աշխատանքներ կատարելու նպատակով՝ ժամանակավորապես դադարեցնել Համակարգի գործունեությունը՝ նախապես տեղեկացնելով Օգտատիրոջը:

5.2.5. Համակարգի օպերատորն իրավունք ունի իր պաշտոնական կայքում նախապես, բայց ոչ ուշ քան համապատասխան փոփոխությունը կատարելուց 1 (մեկ) աշխատանքային օր առաջ, հաղորդագրություն տեղադրելուց հետո՝ միակողմանիորեն փոփոխել Հրապարակային պայմանագրի դրույթները: Տվյալ դեպքում Օգտատերն իրավունք է ձեռք բերում միակողմանիորեն լուծել Հրապարակային պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Համակարգի օպերատորին: Օգտատիրոջ կողմից սույն կետով սահմանված Հրապարակային պայմանագրի միակողմանիորեն լուծման վերաբերյալ Համակարգի օպերատորին չտեղեկացնելու և Համակարգի ծառայություններից օգտվելու դեպքում նշված փոփոխությունը/փոփոխությունները համարվում են համաձայնեցված և ընդունված Օգտատիրոջ կողմից:

5.2.6. Հրապարակային պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների իրականացման համար իր հաշվին և իր հայեցողությամբ ներգրավել երրորդ անձանց:

5.2.7. Պահանջել և ստանալ [Հավելված 1](#)-ով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները:

5.2.8. ՀՀ օրենսդրությամբ, ներառյալ՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով Օգտատիրոջից պահանջել հավելյալ տեղեկություններ:

5.2.9. Արգելափակել Օգտատիրոջ հաշվառման հաշիվը հետևյալ դեպքերում.

ա. Օգտատիրոջ կողմից իր ID-ն արգելափակելու խնդրանքով Համակարգի Օպերատորին համապատասխան պահանջի ներկայացման դեպքում, եթե Օգտատիրոջ ներկայացրած տվյալները թույլ են տալիս նույնականացնել դիմողին,

բ. ID-ի օգտագործումը զուգորդվել է Համակարգ անօրինական մուտք գործելու կամ Համակարգի անվտանգության այլ կերպ խախտման փորձի հետ,

գ. Համակարգի օպերատորի տեղեկատվական անվտանգության համակարգերի կողմից՝ ID-ի ամբողջականության և անվտանգության նկատառումներից ելնելով,

դ. Օգտատիրոջ կողմից Հրապարակային պայմանագրով, ինչպես ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կանոնների խախտման, խախտման կասկածի դեպքում,

ե. Իրավասու մարմնից ստացվել է տեղեկություն առ այն, որ Օգտատերը մահացել է, դատարանի վճռով ճանաչվել է մահացած, անհայտ բացակայող, սնանկ կամ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը ժամանակավորապես դադարեցվել է, մինչև իրավահաջորդի պարզելը կամ ժառանգության բացվելը,

զ. Իրավասու մարմնից ստացվել է տեղեկություն առ այն, որ Օգտատերը ճանաչվել է անգործունակ:

5.2.10. Միակողմանի լուծել Հրապարակային պայմանագիրը, եթե Օգտատերը խախտել է Հրապարակային պայմանագիրը կամ Համակարգի օպերատորի կողմից դասակարգվել է ոչ ցանկալի հաճախորդ՝ դադարեցնելով գործարար հարաբերությունը տվյալ Օգտատիրոջ հետ, այդ թվում, սակայն չբացառելով, հետագայում նույն Օգտատիրոջ հետ նոր պայմանագիր չկնքելը:

## 6. Օգտատիրոջ իրավունքներն ու պարտականությունները

6.1. Օգտատերը պարտավոր է.

6.1.1. Պատշաճ ձևով իրականացնել Հրապարակային պայմանագրով և Համակարգի օպերատորի պաշտոնական կայքում նախատեսված պարտավորությունները:

6.1.2. Համակարգի Օպերատորին տրամադրել հավաստի անձնական տվյալներ և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են Հրապարակային պայմանագրի շրջանակներում ծառայություններից օգտվելու համար:

6.1.3. Օգտատիրոջ կողմից իրականացվող գործարքի հաստատման վերաբերյալ կասկած ունենալու դեպքում անմիջապես այդ մասին տեղեկացնել Համակարգի օպերատորին:

6.1.4. Համակարգից օգտվելու ընթացքում հետևել Համակարգի կանոններին:

6.1.5. Խստորեն պահպանել Հրապարակային պայմանագրի շրջանակներում հայտնի դարձած և փոխանակվող տեղեկատվության գաղտնիությունը:

6.1.6. Պատասխանատվություն կրել իր ID-ից դրամական միջոցների կորստի և այլ բացասական դեպքերի համար, որոնք առաջանում են ID մուտքի և գործարքի հաստատման տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքերում՝ անկախ Օգտատիրոջ անզգուշությունից, անփութությունից, չիմացությունից կամ մեղքի առկայությունից:

6.1.7. Համակարգի օպերատորին հնարավորինս սեղմ ժամկետում ծանուցել այնպիսի հանգամանքների առաջացման, փոփոխման կամ դադարեցման մասին, որոնք էական նշանակություն ունեն Համակարգի գործունեության համար այդ թվում, բայց չսահմանափակվելով, Համակարգում

առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների կամ այլ խնդիրների մասին:

6.1.8. Համակարգի օպերատորին անմիջապես տեղեկացնել Օգտատիրոջ անձնագրային տվյալների կամ Համակարգի օպերատորին տրամադրած այլ տեղեկությունների փոփոխման մասին:

6.1.9. Հաշվառման հաշիվը չօգտագործել կամ հնարավորություն չտալ երրորդ անձանց օգտագործել Հաշվառման հաշիվը ձեռնարկատիրական նպատակներով:

6.1.10. Համակարգի օպերատորին բացահայտել Օգտատիրոջից տարբեր լինելու դեպքում ապահովագրական հատուցում ստացող շահառուին և Համակարգի օպերատորի հիմնավոր պահանջի դեպքում Համակարգի օպերատորին ներկայացնել շահառուի վերաբերյալ տեղեկություններ:

6.1.11. ID-ն օգտագործել բացառապես անձամբ՝ հնարավորություն չտալով երրորդ անձանց օգտագործելու Հաշվառման հաշիվը:

6.1.12. Օգտագործել միայն մեկ հաշվառման հաշիվ՝ բացառությամբ այն դեպքի, երբ երկրորդ հաշվառման հաշվի բացելը հիմնավորող գրավոր ապացույցներ է ներկայացնում Համակարգի օպերատորին, ում կողմից նման անհրաժեշտության պահանջը հիմնավոր է համարվում:

## 6.2. Օգտատերն իրավունք ունի.

6.2.1. Համակարգի կանոնների համաձայն Համակարգում կնքել ապահովագրական պայմանագրեր, այդ թվում՝ երրորդ անձանց համար՝ վերջիններիս համաձայնության դեպքում:

6.2.2. Օգտվել Համակարգում առաջարկվող բոլոր ծառայություններից՝ պայմանով, որ Օգտատերը պատշաճորեն նույնականացված է: Ընդ որում, Համակարգի օպերատորի հաճախորդ դառնալու համար կարևոր նախապայման է վերջինիս կողմից սույն Հրապարակային պայմանագրին հաճախորդի համաձայնությունը՝ օգտվելու Համակարգի կողմից առաջարկվող ծառայություններից, այդ թվում՝ կնքելու ապահովագրական պայմանագիր:

6.2.3. Իրեն տրամադրված ID-ի և/կամ PIN կոդի, ինչպես նաև իր Գաղտնաբառի կորստի դեպքում՝ Համակարգում սահմանված կարգով դիմել Համակարգի Օպերատորին՝ իր ID-ն վերականգնելու, իրեն նոր PIN կոդ և/կամ Գաղտնաբառ հատկացնելու խնդրանքով:

6.2.4. Հաշվառման հաշվում կատարել նույնականացված բջջային հեռախոսահամարի և/կամ էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխություն՝ Համակարգի կանոններին համապատասխան:

6.2.5. Ուղարկել դիմում-բողոքներ ինչպես էլեկտրոնային ձևով՝ Համակարգի օպերատորի պաշտոնական կայքի «Ներկայացնել բողոք» բաժնի միջոցով, այնպես էլ փաստաթղթային եղանակով: Ընդ որում, Օգտատիրոջ կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված դիմումը ենթակա է ներկայացման բացառապես Օգտատիրոջ ID-ի արտոնագրված կամ ապահովագրական համապատասխան պայմանագրով ամրագրված էլեկտրոնային փոստի միջոցով՝ Օգտատիրոջ անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը կցված: Օգտատիրոջ կողմից փոստային հասցեի միջոցով կամ Համակարգի օպերատորի գլխամասում կամ մասնաճյուղում ներկայացված դիմումը ենթակա է ներկայացման՝ Օգտատիրոջ անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը կցված:

6.2.6. Ներկայացնել առաջարկներ Հրապարակային պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների որակի և ընթացակարգի վերաբերյալ:

## 7. Կողմերի պատասխանատվությունը.

7.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Հրապարակային պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Համակարգի Օպերատորից անկախ առաջացած պատճառներով Համակարգի օպերատորը պատասխանատվություն չի կրում Համակարգի գործունեությունն ապահովող սարքավորումների և/կամ ծրագրերի խափանման և սխալների համար, ինչպես նաև Օգտատիրոջ կողմից Համակարգ մուտք գործելու ժամանակավոր անհնարինության համար: Այնուամենայնիվ, Համակարգի օպերատորը պարտավորվում է Օգտատերերին անմիջապես տեղեկացնել առաջացած խնդիրների մասին՝ իրեն հասանելի մեթոդներով:

7.3. Համակարգի օպերատորը պատասխանատվություն չի կրում Օգտատիրոջը ծառայությունների մատուցումը մերժելու համար, եթե այդ մերժումը կատարվել է սույն Հրապարակային պայմանագրով և Համակարգի օպերատորի պաշտոնական կայքում սահմանված հիմքերով:

7.4. Համակարգի օպերատորը պատասխանատվություն չի կրում Օգտատիրոջ բջջային հեռախոսում պարունակվող տեղեկատվության գաղտնիության համար:

7.5. Համակարգի օպերատորի կողմից Օգտատիրոջը մատուցվող ծառայությունների վերաբերյալ առաջացած բողոք-պահանջները բավարարվում են՝ համաձայն Համակարգի օպերատորի պաշտոնական կայքում տեղադրված ընթացակարգի:

7.6. Օգտատերը պատասխանատվություն է կրում իր կողմից գաղտնաբառը, հաշվառման հաշվի համարը, PIN կոդը կամ հաշվառման հաշվին առնչվող որևէ այլ տվյալ կորցնելու կամ որևէ կերպ երրորդ անձանց տրամադրելու հետևանքով առաջացած ցանկացած հետևանքի համար: Սույն կետի իմաստով Գաղտնաբառը և/կամ PIN կոդը երրորդ անձանց հասանելի դարձնելը, Օգտատիրոջ կողմից կարող է կատարվել կամ ակտիվ, կամ պասիվ գործողության կատարումով՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով, որպես այնպիսի թույլ Գաղտնաբառ կամ PIN կոդ ընտրելը, որը հնարավորություն է տալիս երրորդ անձին մուտք գործել հաշվառման հաշիվ կամ կատարել գործարք:

7.7. Համակարգի օպերատորը չի կրում պատասխանատվություն Հրապարակային պայմանագրով սահմանված՝ ID-ից դրամական միջոցների կորստի և այլ բացասական դեպքերի համար, որոնք առաջանում են ID մուտքի և գործարքի հաստատման տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով:

7.8. Օգտատերն ընդունում և հաստատում է, որ սույն Պայմանագրի իմաստով Համակարգի օպերատորի, ինչպես նաև բանկերի կողմից մատուցվող ծառայություններն առաջանում են բացառապես Օգտատեր-Համակարգի օպերատոր փոխահարաբերությունների շրջանակներում, որոնց համար Համակարգի օպերատորը կողմ չէ և Օգտատեր-Համակարգի օպերատորի միջև ծագած իրավահարաբերությունները ենթակա են կարգավորման բացառապես Օգտատիրոջ և Համակարգի օպերատորի միջև կնքված համապատասխան պայմանագրով:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

8.1. Հրապարակային պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, որը ծագել է Հրապարակային պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները,



գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների, ներառյալ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Հրապարակային պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Հրապարակային պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Հրապարակային պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **9. Համակարգում առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների և այլ խնդիրների կարգավորում**

9.1. Համակարգում առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների և համազոր այլ խնդիրների մասին տեղեկանալու պարագայում Օգտատերը կարող է տեղեկացնել Համակարգի օպերատորին առաջացած խնդիրների վերաբերյալ սույն Հրապարակային պայմանագրով ամրագրված և/կամ Համակարգի օպերատորի պաշտոնական կայքում հրապարակված էլեկտրոնային փոստի հասցեով: Եթե Համակարգում առաջացած կեղծիքները, չարտոնված գործառնությունները, տեխնիկական սխալները և համազոր այլ խնդիրները հանգեցրել են Օգտատիրոջ Հաշվառման հաշվին կցված վճարային քարտի տվյալների արտահոսքի կամ ֆինանսական միջոցների կորստի, ապա Օգտատերն այդ մասին պարտավոր է տեղեկացնել Համակարգի օպերատորին անհապաղ, սակայն ոչ ուշ քան նման կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների և համազոր այլ խնդիրների մասին տեղեկանալուց 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում:

9.2. Համակարգում առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների և համազոր այլ խնդիրների մասին տեղեկանալու պարագայում Համակարգի օպերատորը պարտավոր է ձեռնարկել տեխնիկապես հնարավոր բոլոր միջոցառումները և գործողությունները չարտոնված գործառնությունների չեղարկման, կեղծիքների և տեխնիկական սխալների վերացման և համազոր այլ խնդիրների լուծման ուղղությամբ: Համակարգի օպերատորը ձեռնարկում է Համակարգում առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների և համազոր այլ խնդիրների առաջացման պատճառների ուսումնասիրություն, միջոցներ ձեռնարկում դրանց պատճառների վերացման ուղղությամբ և ծանուցում Օգտատերերին ձեռնարկված միջոցառումների արդյունքների վերաբերյալ:

9.3. Եթե Համակարգում առաջացած կեղծիքները, չարտոնված գործառնությունները, տեխնիկական սխալները և համազոր այլ խնդիրները հանգեցրել են Օգտատիրոջ Հաշվառման հաշվին կցված վճարային քարտի ֆինանսական միջոցների կորստի, ապա Համակարգի օպերատորը պարտավոր է վերականգնել Օգտատիրոջ Հաշվառման հաշվից պակասած ֆինանսական միջոցները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Համակարգում կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների և այլ համազոր խնդիրների առաջացման պահից անցել է 2 (երկու) ամսից ավելի կամ Օգտատերն այդ մասին չի տեղեկացրել Համակարգի օպերատորին կեղծիքի, չարտոնված գործառնության, տեխնիկական սխալի կամ այլ համազոր խնդրի մասին տեղեկանալուց 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում:

## **10. Կիրառելի իրավունք և վեճերի կարգավորում**

10.1. Հրապարակային պայմանագիրը մեկնաբանվում է ՀՀ օրենսդրության համապատասխան:

10.2. Հրապարակային պայմանագրի կիրառման և մեկնաբանման առնչությամբ առաջացած ցանկացած վեճ կամ տարաձայնություն ենթակա է կարգավորման «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ՍՓԲԸ-ի կողմից մշակված ընթացակարգի, որը հասանելի է Համակարգի օպերատորի պաշտոնական կայքում:

10.3. «Ֆինանսական համակարգի հաշտարարի» մասին ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Հրապարակային պայմանագրի առնչությամբ առաջացած վեճը կամ տարաձայնությունը, որը չի լուծվում Հրապարակային պայմանագրի 10.2-րդ կետով սահմանված բանակցային եղանակով, կարող է հանձնվել ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը՝ «Ֆինանսական Համակարգի Հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով քննելու և լուծելու համար:

## 11. Այլ դրույթներ

11.1. Հրապարակային պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Համակարգի օպերատորի պաշտոնական կայքում նախատեսված դրույթներով, իսկ այդպիսի դրույթների բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ:

11.2. Հրապարակային պայմանագիրն էլեկտրոնային տեսքով կնքելն իր իրավաբանական հետևանքներով հավասարեցվում է Համակարգի օպերատորի և Օգտատիրոջ ստորագրությամբ գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով պայմանագիր կնքելու իրավաբանական հետևանքներին:

11.3. Համակարգում բոլոր ծառայությունների մատուցման կարգը և ժամկետները նկարագրված են Համակարգում և/կամ Համակարգի օպերատորի պաշտոնական կայքում:

11.4. Հրապարակային պայմանագիրն ուժի մեջ է մտնում Օգտատիրոջ «LIGA Mobile» բջջային հավելվածում ID-ի ստեղծման պահից:

11.5. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել Հրապարակային պայմանագիրը՝ այդ մասին մյուս կողմին առնվազն 15 (տասնհինգ օր) առաջ ծանուցում ուղարկելու միջոցով՝ բացառությամբ սույն Համաձայնագրի 5.2.5., 5.2.10., 8.1. և 10.3. կետերում նկարագրված դեպքերի:

## 12. Ծանուցումներ

12.1. Հրապարակային պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Հրապարակային պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները կատարվում են էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի, Համակարգի օպերատորի պաշտոնական կայքի, էլեկտրոնային փոստի հասցեի, SMS տեքստային հաղորդագրությունների միջոցով: Նշված եղանակներով կատարված ծանուցումը համարվում է պատշաճ:

12.2. Տեխնիկական առանձնահատկություններից ելնելով՝ Օպերատորը չի կարող երաշխավորել էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսահամարով ուղարկված հաղորդագրությունների ստացումը Հաճախորդի կողմից:

## Հավելված 1

### ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

#### 1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Սույն հավելվածը համարվում է Հրապարակային պայմանագրի անբաժանելի մասը, և դրանում ներառված բոլոր բառերը/հասկացություններն ունեն Հրապարակային պայմանագրում սահմանված նշանակությունները:

1.2. Համակարգի օպերատորը սույնով պարտավորվում է ապահովել իր Օգտատերերի անձնական տվյալների գաղտնիությունը՝ Տվյալների գաղտնիության և մշակման մասին փաստաթղթում սահմանված պայմաններով: Ընդունելով սույն փաստաթղթում ներկայացված պահանջներն ու պայմանները՝ Օգտատերը համաձայնում է Համակարգի օպերատորի կողմից իր անձնական տվյալների օգտագործմանն ու բացահայտմանը՝ Տվյալների գաղտնիության և մշակման մասին փաստաթղթում ներկայացված կարգով:

1.3. Օգտատերը Հրապարակային պայմանագրի վավերացմամբ տալիս է համաձայնությունն առ այն, որ Համակարգի օպերատորն Օգտատիրոջ Հաշվառման հաշվի ստեղծման և ապահովագրական պայմանագրի կնքման համար տրամադրված անձնական բոլոր տվյալները կարող է մշակել, այդ թվում՝ հավաքագրել, մուտքագրել, պահպանել, օգտագործել, ուղղել կամ իրականացնել օրենքով չարգելված այլ գործողություններ, այդ թվում՝ տվյալների վերաբերյալ կատարել լրացուցիչ հարցում օրենքով չարգելված աղբյուրների՝ հետազայում ապահովագրության ցանկացած տեսակի գծով ծառայություններ մատուցելու նպատակով: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի կողմից՝ դիմումի հիման վրա, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, որը պետք է ուղարկվի Օգտատիրոջ Հաշվառման հաշվից կամ Հաշվառման հաշվում նույնականացված էլեկտրոնային փոստի հասցեից կամ համապատասխան ապահովագրական պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից:

#### 2. Անձնական տվյալների հավաքում և օգտագործում

2.1. Օգտատիրոջը Համակարգում գրանցելու և ID տրամադրելու նպատակով Համակարգի օպերատորը ձեռք է բերում Օգտատիրոջ անձնական մի շարք տվյալներ, որոնք են՝ անձը հաստատող փաստաթղթի համարը, ազգանունը, անունը, ծննդյան ամսաթիվը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը: Սույն կետի նպատակներից ելնելով՝ Համակարգի օպերատորն իրավունք ունի պահանջել և իր մոտ պահել Օգտատիրոջ անձը հաստատող փաստաթղթի և/կամ հանրային ծառայությունների համարանիշի թղթային կամ էլեկտրոնային պատճենը:

2.2. Հրապարակային պայմանագրի ուժով Համակարգի օպերատորն իրավունք և լիազորություն է ստանում համապատասխան հարցում կատարել և ստանալ Օգտատիրոջ անձնական տվյալների վերաբերյալ թարմացված/փոփոխված տեղեկություններ՝ օրենքով չարգելված աղբյուրների տեղեկատվական շտեմարանից: Նշված անձնական տվյալների ձեռքբերումը նպաստում է Օգտատերերի՝ ՀՀ օրենսդրությամբ, Հրապարակային պայմանագրով և Համակարգի օպերատորի կանոններով սահմանված նույնականացմանը և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումների ձեռնարկմանը:

2.3. Համակարգի օպերատորը պարտավորվում է չբացահայտել և որևէ կերպ չտարածել իր Օգտատերերի կողմից տրամադրված անձնական տվյալները՝ բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ և Հրապարակային պայմանագրով սահմանված դեպքերի:

2.4. Համակարգի օպերատորը պարտավորվում է պահպանել միայն Համակարգ մուտքագրված, Համակարգի օպերատորին տրամադրված Օգտատերերի անձնական տվյալների գաղտնիությունը:

2.5. Համակարգի կողմից Օգտատիրոջ անձնական տվյալները կարող են օգտագործվել վերջինիս Գաղտնաբառը վերականգնելու, ֆորս-մաժորային իրավիճակներում Օգտատիրոջ հետ կապվելու, Օգտատիրոջը Համակարգում փոփոխությունների և ավելացումների մասին տեղեկացնելու և Համակարգի օպերատորի կողմից հաստատված աշխատակարգերով և կանոնակարգով նախատեսված այլ դեպքերում:

2.6. Օգտատերը գիտակցում է և համաձայն է, որ տրամադրված անձնական տվյալները և իր կողմից իրականացվող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կարող են փոխանցվել Համակարգի օպերատորի հետ համագործակցող ֆինանսական կազմակերպություններին՝ ներառյալ բանկային ծառայություններ մատուցողներին: Օգտատիրոջ կողմից Համակարգի օպերատորին տրամադրված անձնական տվյալները որևէ այլ դեպքում չեն տրամադրվում երրորդ անձանց՝ բացառությամբ Օգտատիրոջ կողմից Համակարգի օպերատորի հետ կնքած Հրապարակային պայմանագրի խախտման և/կամ ՀՀ օրենքներով նախատեսված դեպքերի: Բոլոր այլ դեպքերում նման տեղեկատվությունը կարող է բացահայտվել միայն Օգտատիրոջ համաձայնությամբ կամ կարգադրությամբ:

2.7. Օգտատիրոջ և Համակարգի օպերատորի միջև կնքված Հրապարակային պայմանագրի նպատակներից ելնելով գաղտնի չի համարվում այն տեղեկատվությունը, որը կարող էր ստացվել այլ եղանակով՝ առանց գաղտնիության պահանջների խախտման:

2.8. ID-ով կատարված գործառույթներին վերաբերող տեղեկատվությունը և փաստաթղթերը Համակարգի օպերատորը պահպանում է համապատասխան գործարքի կատարման պահից անժամկետ:

2.9. Օգտատերը կրում է իր կողմից Համակարգի օպերատորին տրամադրված տեղեկատվության ոչ ճշգրիտ լինելու բացասական հետևանքների ռիսկերը:

### **3. Պաշտպանվածություն**

3.1. «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն պաշտպանում է իր Օգտատիրոջ անձնական տվյալները, որոնք գրանցված են Համակարգում, չլիազորված մուտքերից, օգտագործումից և/կամ բացահայտումից: Օգտատիրոջ անձնական տվյալները և բոլոր գումարային գործարքները պաշտպանված են Secure Socket Layer (SSL) տեխնոլոգիայով՝ 128-բիտանոց, բարձր պաշտպանվածություն ունեցող կոդավորմամբ, որը լիարժեքորեն ապահովում է տեղեկատվական անվտանգ հոսքը Օգտատիրոջից դեպի սերվեր և հակառակը՝ բացառելով որևէ երրորդ կողմի միջամտությունը:

### **4. Փոփոխությունների մասին ծանուցում**

4.1. Համակարգի աշխատանքը բարելավելու նպատակով՝ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն իրավունք ունի փոփոխություններ կատարել սույն՝ Տվյալների գաղտնիության մասին փաստաթղթում: «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն պարտավորվում է Օգտատիրոջը տեղյակ պահել Համակարգի կողմից Օգտատիրոջ անձնական տվյալների օգտագործման կանոնների և սահմանափակումների փոփոխությունների մասին այդ փոփոխությունները կատարելուց առնվազն 15 օր առաջ:

## Հավելված 2

### «LIGA Mobile» ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԸ

1. Սույն հավելվածը համարվում է Հրապարակային պայմանագրի անբաժանելի մասը, և դրանում ներառված բոլոր բառերը/հասկացություններն ունեն Հրապարակային պայմանագրում սահմանված նշանակությունները:

2. Համակարգում գոյություն ունի Օգտատիրոջ երեք կարգավիճակ՝ Գրանցված Օգտատեր, Նույնականացված Օգտատեր և Ամբողջականապես նույնականացված Օգտատեր:

2.1. Օգտատերը համարվում է *գրանցված* Համակարգում ID ստանալուց կամ հեռախոսահամարը և/կամ էլեկտրոնային փոստի հասցեն հաստատելուց հետո:

2.2. «Նույնականացված» կարգավիճակը ձեռք է բերվում միայն Համակարգի ծրագրային հավելվածի միջոցով հետևյալ քայլերի հաջորդականության ամբողջությունը պահպանված լինելու դեպքում, այն է Օգտատերը՝

2.2.1. Մուտք է գործում Համակարգի ծրագրային հավելվածի «Նույնականացվել» բաժին,

2.2.2. Հաստատում է, որ ծանոթացել է Համակարգի պայմաններին,

2.2.3. Մուտքագրում է անձը հաստատող փաստաթղթի համարը,

2.2.4. Հաստատում է, որ ծանոթ է անձնական տվյալների հարցման պայմաններին,

2.2.5. Նկարում է իր անձը հաստատող փաստաթուղթը կամ կցում է անձը հաստատող փաստաթղթի նկարը,

2.2.6. Անցնում է կենսաչափական վավերացում՝ դեմքի ճանաչման միջոցով՝ ինքնալուսանկարի, կամ դեմքն ամբողջապես ցույց տվող տեսանյութի միջոցով,

2.2.7. Համակարգի օպերատորի կողմից հատուկ միջոցներով ստուգվում են մուտքագրված տվյալները, ինչից հետո անձի նույնականացումը համարվում է՝

2.2.7.1. Կամ բարեհաջող ավարտված և ձեռք է բերում «Նույնականացված»-ի կարգավիճակ,

2.2.7.2. Կամ դադարեցված: Այս

2.2.2. Նույնականացվելուց հետո, ապա Համակարգում վճարային քարտի տվյալները մուտքագրելով՝ Օգտատերը ձեռք է բերում «Ամբողջական նույնականացված»-ի կարգավիճակ:

3. Սույն հավելվածի 2.2.-րդ ենթակետով սահմանված ստուգումը բարեհաջող չավարտվելու դեպքում, Օգտատերը ծանուցվում է այդ մասին:

3.1. Նույնականացվելու ձախողման դեպքում Օգտատերը չի զրկվում նույնականացվելու իր հնարավորությունից և կարող է այդ նպատակով այցելել Համակարգի օպերատորի մասնաճյուղ կամ սպասարկման գրասենյակ կամ նորից իրականացնել սույն հավելվածի 2.2. կետի 2.2.-2.2.7 ենթակետերում նշված գործընթացները:

4. Ոչ ռեզիդենտ Հաճախորդների դեպքում.

4.1. Համակարգի օպերատորն իրավունք ունի պահանջել օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերի թարգմանությունը հայերեն լեզվով:

4.2. Համակարգի օպերատորն իրավունք ունի ցանկացած դիմողի հայտը մերժել, առանց մերժման մասին իր որոշումը գրավոր տեսքով հիմնավորելու:

4.3. Արգելվում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրություն չունեցող պետությունների և տարածքների, ինչպես նաև օֆշորային տարածքների ցուցակներում ընդգրկված երկրներում գրանցված կամ բանկային հաշիվներ ունեցող դիմողներին Համակարգում գրանցելը:

5. Համակարգում գրանցված Օգտատերերի Հաշվառման հաշիվ մուտք գործելու, ինչպես նաև գործարքները հաստատելու նպատակով նույնականացնելու համար կիրառվում են հետևյալ միջոցները.

5.1. Ծածկագիր կամ PIN կոդ, որը կիրառվում է հետևյալ կերպ.

5.1.1. Գրանցման ժամանակ Օգտագործողն ընտրում է իր համար ծածկագիր: Ծածկագիրն անհրաժեշտ է գործառույթները (գործարքները) հաստատելու և տվյալները փոփոխելու համար: Ծածկագիրն Օգտատիրոջ թվային ստորագրությունն է: Դա նշանակում է, որ ցանկացած գործառույթ կատարելուց առաջ այն պետք է վավերացվի ծածկագրով: Ծածկագիրը պաշտպանում է հասարակ կողերի օգտագործման ռիսկերից, կանխում է երրորդ կողմի գործողություններն այն ժամանակահատվածում, երբ Օգտատերը համակարգչի (բջջային հեռախոսի) մոտ չէ և վերջինիս Հաշվառման հաշիվը գտնվում է ակտիվ աշխատանքային ռեժիմում տվյալ բջջային հեռախոսի վրա: Եթե Օգտատիրոջ բջջային հեռախոսը հնարավորություն ունի իրեն նույնականացնել կենսաչափական սքանավորման միջոցով (մատնահետք, դեմք և այլն), ապա Օգտագործողը կարող է ընտրել կենսաչափական սքանավորման միջոցը Հաշվառման հաշիվը մուտք գործելու կամ գործառույթները (գործարքները) հաստատելու ժամանակ ծածկագիր մուտքագրելու փոխարեն, ընդ որում՝ այդ դեպքում ևս ծածկագրի մուտքագրումը կարող է պահանջվել:

5.2. Գաղտնաբառ, որը կիրառվում է հետևյալ կերպ.

5.2.1. Օգտատիրոջ կողմից Հաշվառման հաշվի գրանցման ժամանակ ընտրված գաղտնաբառը պետք է միաժամանակ համապատասխանի առնվազն ստորև նշված բոլոր չափանիշներին.

5.2.1.1. Գաղտնաբառը պետք է կազմված լինի առնվազն ութ նիշից,

5.2.1.2. Գաղտնաբառը պարտադիր կերպով պետք է պարունակի առնվազն մեկ մեծատառ լատինատառով, մեկ փոքրատառ լատինատառով, մեկ թվանշան և/կամ մեկ նշան:

5.2.2. Գաղտնաբառի նկատմամբ սույն Հավելված 5.2.1-ին կետով սահմանված պահանջները կիրառելի են, ինչպես Օգտագործողի կողմից Հաշվառման հաշիվ գրանցելիս ընտրվող գաղտնաբառերի նկատմամբ, այնպես էլ արդեն իսկ ընտրված գաղտնաբառը փոփոխելու պարագայում: